

Հայոց Պապայ վասն այսր իրաց ոչ ինչ սակաւ լինէր թշնամութեամբ ընդ Մուշեղի մինչեւ ի բազում ժամանակս:

ԳԼՈՒԽ Գ.

1 Յաղագս Հայր մարդպետին, եթէ ո՛րպէս սպանանել հրամայեաց թագաւորն Պապ:

2 Ապա պատմեցաւ թագաւորին Պապայ յաղագս արեւրացն<sup>1</sup>՝ զոր եղ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ, մաւր թագաւորին Պապայ, թշնամանս ճաղանաց ի բերդարգել պաշարմանն. զի իբրեւ զբոզ մի, այնպէս թշնամանեաց զնա ի ժամանակի՝ իբրեւ եմուտ անդր գաղտուկ, եւ եղ անարգանս տիկնոջն, եւ եկն ել անտի եւ փախեաւ. ետուն զայս ամենայն զրոյց թագաւորին: 3 Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարաւնոյ, եւ Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին յիւրում բերդին՝ որում<sup>2</sup> Ողական կոչեն, որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ, եկն եհաս մի դեսպան յարթայէն Պապայ առ զաւրավարն Հայոց Մուշեղ. եւ ունէր առ նա հրովարտակ. եւ գրեալ էր ի հրովարտակին անդր հրաման առ նա, զի չարամահ սատակեսցէ զՀայր մարդպետն: 4 Եւ նա իբրեւ զայս հրամանս ընկալեալ ի ձեռն առնոյր, յղէր առ մարդպետն Հայր դաւով, եւ մեծարանաց պատճառանաւ առ ինքն կոչէր յՈղականն. եւ էին աւուրթ ձմերայնոյ, եւ սաստկացեալ կցեալ<sup>3</sup> էր գետն Եփրատ: 5 Ապա կոչեալ եղել առ նա Հայր մարդպետն իբրեւ ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ մարդպետն ի բերդն յՈղական: 6 Ետ հրաման զաւրավարն Մուշեղ զաւրակաւնացն ունել զնա, եւ մերկանալ իբրեւ ի մաւրե, եւ կապել զձեռս նորա ի ներքոյ ծնկաց նորա, եւ իջուցանել զնա ի գետն, եւ դնել ի վերայ սառնին կցելոյ գետոյն. եւ սատակեցաւ անդէն: 7 Եւ եղել ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուղիղ գլխոյն ի ցրտոյն վայրեալ ի բաց իջեալ թափեալ էր ընդ քիթս նորա: 8 Եւ փոխանակ ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն կարգէ<sup>4</sup> զԴգղակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հաւր նորա գաւու միոջ լեալ ի նոյն<sup>5</sup> գործ մարդպետութեանն:

1 *Յերկուս օր. օրինացն*

2 *Օրինակ մի յաւելու՝ անունն*

3 *Օրինակ մի չունի՝ կցեալ*

4 *Յօր. պակասի՝ կարգէ*

5 *Յօր. նոյն*